ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Արտահայտվելու և տեղեկատվության ազատությունը մարդու հիմնական իրավունքներից մեկն է: ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը, կարևորելով դրա նշանակությունը, 1946թ. իր առաջին իսկ նստաշրջանում ընդունած 59 (I) բանաձևում սահմանում է, որ տեղեկատվության ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է և այն բոլոր ազատությունների հիմնաքարն է, որոնց առնչվում է Միավորված ազգերի կազմակերպությունը:[1]

Ինչպես նշվում է հիշյալ բանաձևում, արտահայտվելու ազատությունը, ներառյալ տեղեկատվության ազատությունը, հիմնավորապես կարևոր է ոչ միայն սոսկ որպես իրավունք, այլև որպես մյուս բոլոր իրավունքների իրականացման համար սկզբնաղբյուր:

Արտահայտվելու ազատության կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում բազմիցս ընդգծել են նաև միջազգային դատարանները: Օրինակ, այսպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանը այս առնչությամբ սահմանել է մի այնպիսի դրույթ, որն այժմ դրվում է արտահայտվելու ազատությանը վերաբերվող նրա գրեթե բոլոր գործառույթների հիմքում. «Արտահայտվելու ազատությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության էական հիմքերից մեկը, նրա առաջընթացի և յուրաքանչյուր մարդու զարգացման հիմնարար պայմաններից մեկը[2]:»

---

[1] Memorandum on The Law on Television and Radio Broadcasting in the Republic of Armenia, by ARTICLE 19 Global Campaign for Free Expression, London, February 2001.

[2] Հանդիսայդի դատավճիռ, 7 դեկտեմբեր 1976, A#24, § 49:

Հետագայում այս հիմնադրույթը հաստատվել է ինչպես ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի, այնպես էլ Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի կողմից: Դրան համապատասխան «Արտահայտվելու ազատությունը այն հիմնաքարն է, որի վրա խարսխվում է ժողովրդավարական հասարակության բուն էությունը: Այն պարտադիր է հասարակական կարծիքի ձևավորման համար... Կարելի է ասել, որ այն հասարակությունը, որը լավ տեղեկատվայնացված չէ, իրապես ազատ հասարակություն չէ[3]:»

Արտահայտվելու և տեղեկատվության ազատությունն իր ամրագրումն է ստացել մարդու իրավունքներին առնչվող մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում և իր արտացոլումն է գտել նաև ազգային օրենսդրության մեջ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ իրավունքի իրավական կարգավորումը հիմնականում դրսևորվում է երկու ուղղությամբ. և միջազգային փաստաթղթերում, և ազգային օրենսդրության մեջ մի դեպքում տրվում է իրավունքի ընդհանուր սահմանումը, մյուս դեպքում՝ այդ իրավունքի սահմանափակման հնարավորությունները՝ որոշ դեպքերում նշելով նաև սահմանափակման սահմանները:

Միավորված ազգերի կազմակերպության կողմից 1948թ. ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» առաջին համընդգրկուն միջազգային փաստաթուղթն է, որը հռչակում է այդ իրավունքը: Հռչակագրի 19 հոդվածը հետևյալ կերպ է սահմանում այն.

«Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանց ազատ արտահայտման իրավունք: Այդ իրավունքը ներառում է սեփական համոզմունքներին անարգել մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու անկախ պետական սահմաններից տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Այս իրավունքն առավել ընդարձակ ձևակերպվել է «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 19 հոդվածում. «1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատորեն

---

[3] Compulsory Membership in an Association Prescribed by Law for the Practice of Journalism, Advisory Opinion OC-5/85 of 13 November 1985, Series A, No. 5, para. 70.

արտահայտելու իրավունք, որը ներառում է ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունն անկախ պետական սահմաններից՝ բանավոր, գրավոր կամ մամուլի կամ արտահայտվելու գեղարվեստական ձևերի միջոցով, կամ այլ եղանակներով իր ընտրությամբ»: Ի տարբերություն «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի», «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» ոչ միայն հռչակում է այդ իրավունքը, այլև սահմանում է, որ այն կարող է զուգորդվել որոշակի սահմանափակումներով, որոնք սակայն պետք է սահմանված լինեն օրենքով և անհրաժեշտ լինեն այլ անձանց իրավունքների և հեղինակության հարգման, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանման համար:

Այս ձևակերպումը ենթադրում է, որ միջազգային իրավունքը թույլ է տալիս արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքի որոշ սահմանափակումներ՝ տարաբնույթ մասնավոր և հանրային շահերի պաշտպանության նպատակով:

Հայաստանի Հանրապետությունը, 2001թվականի հունվարի 25-ին անդամագրվելով Եվրոպայի Խորհրդին, ստորագրեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան: «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 19 հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածը համանման դրույթներով են պաշտպանում արտահայտվելու ազատությունը: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն արտահայտել իր կարծիքը: Այդ իրավունքը ներառում է իր կարծիքին մնալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից: Այս հոդվածը

պետություններին չի խոչընդոտում ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիկական ձեռնարկությունների արտոնագրում մտցնել[4]:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածը նույնպես պարունակում է դրույթ արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ՝ ամրագրելով ինչպես դրա չափերը. «Այդ ազատությունների իրականացումը, որը պարտավորություններ ու պատասխանատվություն է սահմանում, կարող է կապված լինել ձևականությունների, պայմանների, սահմանափակումների կամ տուգանման պատժահրահանգների հետ, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը պաշտպանելու, գաղտնի ստացված տեղեկության հրապարակումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը ապահովելու նպատակով:»

Կոնվենցիայի 10 հոդվածի իմաստից կարելի է կատարել մի քանի կարևոր եզրահանգում: Նախևառաջ, անհրաժեշտ է նշել, որ զանգվածային լրատվության ազատությունն այստեղ հանդես է գալիս կարծիքի արտահայտման ազատության ձևով, և այդ ազատությունն ընդհանուր առմամբ կանոն է, իսկ պետության միջամտությունը դրա իրականացմանը՝ բացառություն: Ընդ որում, միջամտության հնարավորությունը չի նշանակում միջամտության անհրաժեշտություն: Եթե ժողովրդավարական հասարակությունը կարծիքի արտահայտման ազատության որևէ ձևի սահմանափակման կարիք չունի, ապա պետությունը պարտավոր չէ որևիցե քայլ ձեռնարկել այդ ուղղությամբ:

Կարծիքի արտահայտման ազատության ոլորտում պետության իրավաչափ միջամտության համար, նախ, պետք է լինի օրենսդրական հիմք, երկրորդ, միջամտության համար առիթ կարող են լինել միայն այն հիմքերը,

---

[4] «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, 1950թ. նոյեմբերի 4, 10 հոդված:

որոնք թվարկված են 10 հոդվածի երկրորդ կետում, երրորդ, և սա ամենակարևորն է, միջամտությունը պետք է համաչափ լինի ժողովրդավարական հասարակության պահանջներին: Քանի որ նշված չափանիշները բավականին անորոշ են, այս նորմի կիրառման կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմաթիվ մեկնաբանություններ է տվել: Մասնավորապես, դատարանը, իսկ ավելի վաղ նաև Հանձնաժողովը տվել են «սեփական կարծիքի արտահայտում» հասկացության ընդլայնված մեկնաբանությունը՝ սահմանելով, որ այն տարածվում է ոչ միայն այն տեղեկատվության ու գաղափարների վրա, որոնք պետության կողմից ընկալվում են բարյացակամորեն կամ անտարբերությամբ, այլ նաև նրանց վրա, որոնք կամ անհանգստություն են պատճառում իշխանություններին կամ բնակչության մի մասին:

Այսպիսով, արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի երեք չափանիշի: Այդ չափանիշները պահանջում են, որ ցանկացած սահմանափակում պետք է ա) նախատեսված լինի օրենքով, բ) լինի հանրային օրինական շահի պաշտպանության նպատակով և գ) անհրաժեշտ լինի այդ շահի անվտանգության համար:

Երրորդ չափանիշը նշանակում է, որ նույնիսկ օրինական շահի պաշտպանությանն ուղղված միջոցները պետք է համապատասխանեն «անհրաժեշտություն» հասկացությամբ սահմանված պահանջվող անհրաժեշտ ստանդարտին: Չնայած դրան, բացարձակ անհրաժեշտություն չի պահանջվում, քանի որ պետք է դրսևորված լինի «անհետաձգելի ճնշող սոցիալական կարիք», սահմանափակումը պետք է համամասն լինի հետապնդվող օրինական նպատակին, իսկ սահմանափակումը արդարացնող պատճառաբանությունները պետք է լինեն տեղին, գործին առնչվող և բավարար: Այլ կերպ ասած, պետությունը_արտահայտվելու ազատությունը պետք է սահմանափակի հնարավորին չափ քիչ: Անորոշ կամ ընդհանուր գծերով սահմանված սահմանափակումները, նույնիսկ եթե դրանք համապատասխանում են «օրենքով սահմանված» չափանիշին, հիմնական.

անընդունելի կլինեն, քանի որ դրանք հեռու են նրանից, ինչը խստորեն պահանջվում է օրինական շահի պաշտպանության համար:

Արտահայտվելու ազատության իրավունքը և նրա սահմանափակումներն իրենց ամրագրումն են ստացել նաև «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին» Անկախ պետությունների համագործակցության կոնվենցիայի 11 հոդվածում: Դրան համապատասխան՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է սեփական կարծիքին մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը ցանկացած օրինական եղանակով՝ առանց պետական իշխանությունների միջամտության և անկախ պետական սահմաններից:

2. Քանի որ այդ ազատություններից օգտվելը պարտականություններ և պատասխանատվություն է սահմանում, այն կարող է զուգորդվել այնպիսի ձևականություններով, պայմաններով ու սահմանափակումներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար[5]»:

Գոյություն ունեն Եվրոպայի խորհրդի և նրա մարմինների մի շարք որոշումներ, որոնք վերաբերվում են զանգվածային լրատվության ազատության կոնկրետ մարմնավորմանը: Օրինակ, Նախարարների կոմիտեի «Զանգվածային լրատվության միջոցների թափանցիկության ապահովման միջոցառումների մասին» թիվ R(94)13 և «Զանգվածային լրատվության միջոցներում բազմակարծության խթանման միջոցառումների մասին» թիվ R(99)1 հանձնարարականները: Հակտանշական է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 428 (1970) բանաձևը: Դրանում թվարկվում են պահպանման համար այնպիսի անհրաժեշտ սկզբունքներ, որպեսզի

---

[5] «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին» Անկախ պետությունների համագործակցության կոնվենցիա,(1995թ. մայիսի 25), 11 հոդված:

զանգվածային լրատվության միջոցները կարողանան կատարել իրենց գործառույթներն ի շահ հասարակության: Այդ թվում՝

ա) կարծիքի արտահայտման ազատությունը պետք է տարածվի զանգվածային լրատվության միջոցների վրա,

բ) զանգվածային լրատվության միջոցներում կարծիքի արտահայտման ազատությունը պետք է ներառի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու, փոխանցելու, հրապարակելու և տարածելու ազատությունը,

գ) իշխանությունները պարտավոր են խելամտության սահմաններում տրամադրել տեղեկատվություն հասարակայնության համար հետաքրքրություն ներկայացնող հարցերով, իսկ զանգվածային լրատվության միջոցները պարտավոր են հաղորդել պետական գործերի մասին լրիվ և սպառիչ տեղեկատվություն,

դ) զանգվածային լրատվության միջոցների անկախությունը պետական վերահսկողությունից պետք է ամրագրված լինի օրենքով. անկախության ցանկացած նեղացում թույլատրելի է միայն դատարանի որոշման, բայց ոչ գործադիր իշխանության մարմինների որոշումների հիման վրա,

ե) չպետք է լինի մամուլի կամ հեռուստառադիոհաղորդումների բովանդակության ոչ ուղղակի և ոչ անուղղակի գրաքննություն. սահմանափակումներ կարող են դրվել միայն «Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի» 10 հոդվածով թույլատրած սահմաններում,

զ) զանգվածային լրատվության միջոցների ներքին կառուցվածքը պետք է երաշխավորի պատասխանատու խմբագիրների ազատությունն արտահայտելու իրենց կարծիքը, նրանց անկախությունը պետք է պաշտպանված լինի,

է) զանգվածային լրատվության միջոցների անկախությունը պետք է պաշտպանված լինի մոնոպոլիաների սպառնալիքից,

ը) ոչ մասնավոր ընկերությունները, ոչ ֆինանսական խմբերը զանգվածային լրատվության միջոցների ոլորտում մենաշնորհի իրավունք չպետք է ունենան և չպետք է թույլ տալ կառավարությանը ենթակա մոնոպոլիաների ձևավորում:

Արտահայտվելու և տեղեկատվության ազատության կարգավորմանն են ուղղված Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներ, որոնց նպատակն է միջազգային փաստաթղթերում և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի իրականացման համար նախատեսել մանրակրկիտ կարգավորում: Տեղեկատվության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս նշել, որ դրանում սահմանվող նորմերը համապատասխանում են միջազգային փաստաթղթերում ամրագրված դրույթներին ինչպես բուն իրավունքի հռչակման, սահմանման, այնպես էլ սահմանափակումների խնդրի առումով: Սահմանափակումներից և դրանց սահմանումներից ոչ մեկն ավելին չեն, քան դրանք նախատեսված են միջազգային իրավունքի նորմերով:

Միավորված ազգերի կազմակերպության 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի այս նորմը նույն բովանդակությամբ ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 24 հոդվածում. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»: Ըստ էության և՝ հռչակագրի, և՝ ՀՀ Սահմանադրության հիշատակված նորմերն ուղղված են խոսքի և արտահայտվելու ազատության հռչակմանը՝ առանց նշելու նրա սահմանափակման հնարավորությունները: Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության սահմանադրության 44 հոդվածն անդրադառնում է այդ խնդրին՝ նշելով, որ 24 հոդվածում ամրագրված ազատությունը կարող է սահմանափակվել, սակայն միայն օրենքով, և եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Հիշյալ նորմը ենթադրում է, որ տեղեկատվության ազատությունը բացարձակ չէ, այն կարող է սահմանափակվել, սակայն միայն օրենքով և սահմանադրությամբ սահմանված անհրաժեշտության պարագայում:

«Մամուլի և զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ 1991թ. օրենքը սահմանում է, որ ՀՀ քաղաքացիներն ունեն մամուլով և

զանգվածային լրատվության մյուս միջոցներով իրենց տեսակետները, կարծիքներն արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավաստի լրատվություն ստանալու իրավունք[6]:

2000թ. ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի» մասին ՀՀ օրենքի 4 հոդվածը երաշխավորում է անձանց իրավունքն ազատ ընդունել հեռուստառադիոհաղորդումներ և լրացուցիչ տեղեկատվություն, այդ թվում արբանյակային, կաբելային (լարային) ցանցերով, անվճար կամ վճարովի, ինչպես ապակոդավորող, այնպես էլ հեռուստառադիոհեռարձակման բաց ցանցերով: Նույն հոդվածի համաձայն պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում և միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Հանրային հեռուստառադիոընկերության (առնվազն մեկ հեռուստալիքի և մեկ ռադիոալիքի) ծրագրերի ընդունման համար[7]:

Մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն ցանկացած պետական մարմիններից, հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպություններից, դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվությունը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրությանը, ինչպես նաև նույն օրենքի 6 հոդվածի պահանջներին, որը չի թույլատրում հրապարակել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ: Հրապարակման ենթակա չէ նաև պատերազմ, բռնություն, ազգային ու կրոնական թշնամանք հրահրող, պոռնկություն, թմրամոլություն և քրեորեն պատժելի այլ արարքներ քարոզող, կեղծ և չստուգված լրատվությունը: Առանց քաղաքացու համաձայնության չի թույլատրվում հրապարակել որդեգրման գաղտնիքը և քաղաքացու նեղ անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը ևս հեռուստառադիոհաղորումներում հրապարակվող տեղեկատվության որոշակի արգելքներ է սահմանում, մասնավորապես արգելվում է օգտագործել՝

---

[6] «Մամուլի և զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ օրենք, 1991թ. հոկտեմբերի 8, 2 հոդված:

[7] «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, 2000թ. հոկտեմբերի 9, 4 հոդված:

- իշխանությունը բռնի զավթելու, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու և տապալելու քարոզչության,

- ազգային, ռասայական և կրոնական թշնամանք կամ երկպառակություններ սերմանելու,

- օրենքով պահպանվող պետական կամ այլ գաղտնիքներ հրապարակելու,

- պատերազմ քարոզելու,

- քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված գործողությունների կոչեր տարածելու,

- պոռնկագրություն տարածելու,

- բռնության և դաժանության պաշտամունք, մարդկային արժանապատվությունը նսեմացնող և անչափահասների դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող հաղորդումներ հեռարձակելու,

- զրպարտության, այլ անձանց իրավունքները, անմեղության կանխավարկածը խախտելու նպատակներով[8]:

Այս կապակցությամբ գոյություն ունի տեսակետ, որի համաձայն վերոհիշյալ դրույթների մեծ մասն արդեն իսկ կարգավորված են այլ օրենքներով, մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքով, և անհրաժեշտություն չկա դրանք կրկնել այս օրենքում, քանի որ դա կարող է մամուլի ազատության վրա բացասական ազդեցություն ունենալ: Սակայն գտնում ենք, որ նման մոտեցումն ընդունելի չէ: Օրենքում նման դրույթների ամրագրումը, մեր կարծիքով, չի ծանրացնում օրենքը, և արգելող նորմերի առկայությունը միշտ չէ, որ որևէ ազատության սահմանափակում կամ բացասական ազդեցություն են նշանակում:

Հրապարակման ենթակա տեղեկատվության այս սահմանափակման ընդհանուր ձևակերպումն առավել ընդգրկուն սահմանված և կարգավորված է նաև միջազգային փաստաթղթերում:

1989թ. «Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիան» իր հոդված 7-ում՝ «Հեռարձակողի պարտավորությունները»,

---

[8] «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, 2000թ. հոկտեմբերի 9, 24 հոդված:

սահմանում է, որ ծրագրային ցանկացած հաղորդման մեջ պետք է հարգվեն անհատի արժանապատվությունը և հիմնարար իրավունքները, մասնավորապես դրանք չպետք է լինեն անպարկեշտ և հատկապես պարունակեն պոռնոգրաֆիա, քաջալերեն բռնություն կամ հրարիրեն ռասայական ատելություն: Այն հաղորդումները, որոնք կարող են վնաս հասցնել երեխաների և դեռահասների ֆիզիկական, մտավոր կամ բարոյական զարգացմանը, չպետք է ցուցադրվեն այն ժամերին, երբ նրանք կարող են դիտել դրանք[9]:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Բռնության, ագրեսիայի և պոռնոգրաֆիկ համատեքստ պարունակող տեսագրությունների տարածման վերաբերյալ» R (89)7 հանձնարարականում ամրագրված են սկզբունքներ, որոնք նպատակաուղղված են ուժեղացնելու պայքարը բռնություն, դաժանություն ու պոռնոգրաֆիա պատկերող, ինչպես նաև թմրամոլությունը խրախուսող տեսագրությունների դեմ, հատկապես անչապահասների շահերը պաշտպանելու նպատակով: Այդ սկզբունքները հիմնականում վերաբերվում են տեսագրությունների տարածմանը: Նշված ակտով Նախարարների կոմիտեն անդամ պետություններին հանձնարարականներ է տալիս խրախուսել տեսագրությունների դասակարգման և վերահսկման համակարգերի ստեղծումը: Այդ համակարգերը պետք է ընդգրկեն ազատ կամ սահմանափակ տարածման արտոնագրում, որով կամրագրվեն նման տեսագրությունների տարածման պայմանները, կամ հնարավոր է դրանց տարածման բացարձակ արգելում: Ընդ որում, սահմանափակ տարածման արտոնագրերը կարող են՝

- արգելել վաճառքը կամ վաճառքի առաջարկն անչափահասներին,
- արգելել վաճառքը կամ վաճառքի առաջարկն այն տեղերում, որոնք հատկացված չեն անչափահասների համար,
- արգելել գովազդը,
- արգելել փոստային պատվերների միջոցով իրականացվող վաճառքը:

---

[9] «Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիա», 1989թ. մայիսի 5, 7 հոդված:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Ռասիստական բովանդակությամբ տեսախաղերի վերաբերյալ» R (92)19 հանձնարարականում նշվում է, որ ռասիստական բովանդակությամբ տեսախաղերն անհանդուրժողականության տարածման աղբյուր են և անհանդուրժելի են ժողովրդավարական հասարակություններում: Կարևորվում է նաև այդ խաղերի արտադրությունն ու տարածումը վերջ դնելուն ուղղված միջոցների ձեռնարկումը, քանի որ դրանց հիմնական սպառողները երեխաներն են: Այդ կապակցությամբ անդամ պետություններին հանձնարարվում է դիտարկել տեսախաղերը որպես զանգվածային լրատվության միջոցներ և վերանայել իրենց օրենսդրության ազդեցության դաշտը ռասայական խտրականության և անհանդուրժողականության, բռնությունների և երիտասարդների պաշտպանության բնագավառներում, որպեսզի այն առանց սահմանափակումների վերաբերի նաև ռասիստական բովանդակությամբ տեսախաղերի արտադրությանն ու տարածմանը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Էլեկտրոնային լրատվամիջոցներում բռնություն ցուցադրելու վերաբերյալ» R (97)19 հանձնարարականում մտահոգություն է հայտնվում էլեկտրոնային լրատվամիջոցներում բռնության պատկերման միտումի աճով: Ընդգծվում է այն հանգամանքը, որ անկախ հետապնդվող նպատակից, էլեկտրոնային լրատվամիջոցներում պատկերված բռնությունը երբեմն արդարացված չէ ենթատեքստով և հասնում է անթույլատրելի, անմարդկային և նսեմացնող մակարդակի: Այդ երևույթը կարող է վնաս հասցնել հասարակության, հատկապես երիտասարդների ֆիզիկական, մտավոր կամ հոգևոր զարգացմանը՝ պատճառ դառնալով տանջանքի հանդեպ անզգոնության, անպաշտպանվածության և անվստահության զգացումի առաջացման: Հանձնարարականը վերաբերում է բռնության կամայական պատկերմանը տարբեր էլեկտրոնային լրատվամիջոցներով: Հանձնարարականում այս հասկացությունն ընդգրկում է ռադիոն և հեռուստատեսությունը, ինտերակտիվ հետուստատեսությունը, ինտերնետ և նման ծառայություններ, և այնպիսի արտադրանք, ինչպիսին են տեսախաղերը, կոմպակտ սկավառակները և այլն,

բացառությամբ այն մասնավոր լրատվամիջոցների, որոնք ընդհանուր հադիսատեսի համար տեսանելի չեն:

Սկզբունքորեն խոսքի ազատությունն ընդգրկում է նաև բռնություն պատկերող տեղեկություն ընդունելու և հաղորդելու իրավունքը: Այնուամենայնիվ, բռնության պատկերման որոշ դեպքեր կարող են օրենսդրորեն սահմանափակվել՝ հաշվի առնելով այն պարտականությունները, որոնք պարունակվում են խոսքի ազատության գաղափարում, եթե այդ սահմանափակումը թույլատրվում է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության համար: Մասնավորապես, էլեկտրոնային լրատվամիջոցներում պատկերված բռնության կանխումը կարող է նպատակ հետապնդել հարգելու մարդկային արժանապատվությունը և խոցելի խմբերի՝ երեխաների ու պատանիների պաշտպանությունը, որոնց ֆիզիկական, մտավոր և հոգեկան զարգացումը կարող է վնասվել: